№ 48 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 30 — 1895 — ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 30 № 48

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղուան, կէս տարւանը 6 ղուան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարւանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչեւ 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Redaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

**Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ**

**ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ**

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով։ «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարւանը վեց ղուան։ Արտասահմանի համար 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարւանը 2 ռուբլի կամ 5 ֆրանկ։

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետեւեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ։ Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները։

Ապագիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում։

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շաւիղը ապագայում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Հայկական հարցի մասին. Զգացմունք չը կայ. Նամակ Հայաստանից. Նամակ Կովկասից.ՆԵՐՔԻՆ լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական տեսութիւն· ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Յափշտակութիւն.

### ՇԱՒԻՂԸ ԱՊԱԳԱՅՈՒՄ

—

Լրանում է Շաւիղի երկրորդ տարեշրջանը։ Թէ նա ինչեր արաւ, ինչ ծառայութիւններ մատոյց այդ երկրորդ տարեշրջանում—մի առ մի թւելը աւելորդ կը լինէր. ընթերցողին դիւրին է իմանալ, եթէ նա թերթի ամբողջ տարւայ համարները։ Այսքան միայն հարկաւոր է յիշատակել, որ Շաւիղը եթէ չը խորտակեց, գոնէ խարխլեց պարսկահայ հասարակութիւններին պարփակող այն հրէշային պատը, որ նիւրական, անձեռնմխելի էր համարվում և որին դպչողը կը քարկոծուէր կամ կը ոչնչանար։ Դա մի պատ էր, որ դարերից ի վեր Նրան կառուցանող հրէշների շնորհիւ վարժեցրել էր հասարակութեան, պատկառանքով երկրպագել իսկ Նրա առաջ և Նրան կառուցանողներին. նիւրական անձեր համարել։ Դա մի պատ էր որի շնորհիւ անպատիժ կերպով աղաներ ու կրօնաւորութիւնը, պարազիտներ ու շառլատաններ՝ հարստահարիչների մի խումբ կազմած, պարբերաբար մրգում էին հասարակութեան կենդանութեան հիւթը, նրան պահում խաւարի և տգիտութեան մէջ, նրան վարժեցնում թշնամի դառնալ լոյսին, գիտութեան, քննադատական ոգուն և առաջադիմութեան։

Այդ պատը խարխլեց Շաւիղը։ Նամիմեանց ետևից հալածեց կրօնաւորութեան, աշխատելով քողազերծ անել նրա թագնած գայլային տխորժակը և հասարակութիւններ կոյր պահելու ձգտումները։ Նա երևան հանեց աղաների և շնորհիւ տնտեսական առաւելութեան՝ ազդեցութիւն ձեռք բերած հրէշների կեղտոտ գործունէութիւնը, պարզեց հասարակութեան առաջ նրանց գծուծ հասկացողութիւնը՝ կրթութեան, պատուի կամ այլ այդպիսի վսեմ յատկութիւնների մասին և ցոյց տուաւ թէ ինչպէս նրանք յանուն այդ յատկութիւնների և նրանց տակ թագնուած՝ շատացնում են պարսկահայ հասարակութիւնները փտեցնող կեղտը։ Շաւիղը չը մոռացաւ կըրթական շառլատաններին, խաբերայ ազգասէրներին և մեղմութիւն քարոզելով՝ հասարակութիւնը քնեցնող փարիսեցիներին։ Չը մոռացաւ նաև հայարակական փողեր կլանող և նրանցով նորանոր աւազակութիւններ դարբնող խաբեբաներին...

Մի խօսքով Շաւիղը խարխլեց այդ բոլոր ճիւաղներին պատսպարող պատը, հասկացրեց հասարակութեան որ պիտի քննադատական աչքով նայել իր համար գործողների վրայ, հաշիւ պահանջել նրանցից և նրանց ոչ թէ իրենց վրայ իշխող բռնաւորներ ճանաչել, այլ իրենց ծառայող պաշտօնեաներ համարել և պատասխանատու յայտարարելով՝ չը թողնել որ նրանք համարձակուեն կողոպտել իրենց հարստութիւնը, չարաչար գործածել իրենց զգայմունքները։

Շաւիղը այդ արաւ։ Նա սկսեց այդ և պիտի շարունակի այդ շաւղով։ Նա ոչ միայն վախեցել է այս երկրորդ տարեշրջանում դէպի իրեն ուղղուած ատոր թշնամութիւններից, ոչ թէ պիտի մեղմացնի իր ընթացքը որովհետև զանազան վայրենիներ քարեր են նետել նրա վրայ կամ զանազան մատնիչներ վնասել նրան, այլ անլողդողդ, ճշմարտութեան գրոշը միշտ ձեռքին ընթանալու է նա միշտ համարձակ, միշտ պատրաստ շանթահարելու ինչ որ գծուծ է, ինչ որ ստոր է և ստութիւն. կամ ինչ որ վնասում է այն հասարակութեանը, որին նա կոչուած է անկեղծութեամբ օգուտ տալու։ Նա «մեղմ, կամաց-կամաց» վարդապետութեան այնքան թշնամի է, այդ քնեցնող, թմրեցնող ընթացքին այնքան ատող է, որքան որ կեղտի ու շողոքորթութեան, ստի ու կեղծաւորութեան հակառակորդ։

Նա հալածուեց շատ. նրա աշխատակիցներին Աստուր և Աղաւէլ աղաների պէս անտառային վայրենիներ ծեծել, սպանել աշխատեցին, նրան բազմաթիւ անանուն նամակներով թշնամանեցին... Բայց նա գիտէ որ ճշմարտութեան ճանապարհով գնացողը վարդերի վրայ չէ կոխելու, գիտէ որ ամեն տեսակ ճանճային զեռուներ խայթելու են նրան... Եւ մի թալմ, միշտ առաջ գնացող հսանքի պէս՝ քայլելու է նոյն ուղղութեամբ, առանց շեղուելու, առանց կասելու։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ

(Հոգեբանական պատմուածք)

I

—Երկու հատ Եգիպտական ոսկի ունիմ, կուզէի փոխել. այժմ արդեօք կարելի է մըտնել Կրէդի Լէօնէ.

—Այստեղից երկու քայլ է, գնանք։

Լոնդոնից, մի ծանօթի յանձնարարութեամբ ծընէլ էին եկել երկու Եգիպտացիներ և խնդրել էին նրան օգնել իրենց՝ մի քանի տեղեր գնալու համար։

Նա նրանց համար Սալէվ լեռան կրծքի վրայ գտել էր ամառնային մի պանսիոն, այդ օր էլ նրանց պէտք եղած գործերից վերջինն էր կարգի դնում և այդպիսով շուտով ազատուելու էր այդ հայ զբօսաշրջիկներից։

—Գնացքին ժամանակ շատ ունինք, հարցրեց հասակաւոր եգիպտացին։

—Կէս ժամ միայն կայ։

—Ուրեմն մանենք ոսկիները փոխելու։

Ուսանողը առաջ անցաւ, Կրէդի Լիօնէ—բանկի մեծ դուռը մտեց և ներս մտաւ։

—Գանձարանը ցածրումն է, ցոյց տուաւ նրանց դռնապանը։

Գանձատան փոքրիկ դռնակի առաջը բռնուած էր։ Մի հաստ մարդ էր, սը փող էր փոխում։

Եգիպտացիները նստեցին քիչ հեռու դրուած նստարանի վրայ և սպասեցին, իսկ ուսանողը յենեց կայանքին—դռնակի մօտ և մեքենայօրէն դիտում էր փող փոխողին։

Մի գեր ֆրանսացի էր փող փոխողը. ածիլուած մորուքով. ընչացքն էլ զերծ ած էր։ Մեծ աչքեր, լիքը—կեր թշեր, հաստ շրթունք և ծնօտի տակն էլ մի քանի շերտ մսի յաւելուած։ Հագել էր մաքուր և բոլորի վրայից էլ գիւղացի անասնավաճառի մի լայն—սև շապիկ։

«—Խոզավաճառ պիտի լինի», մտածեց Ուսանողը։

Այդ միջոցին պաշտօնեան ներսից հարցնում էր Խոզաբածին.

—Մանր թղթադրամ կ'ուզէք.

—Տուէք, բայց ոչ—շատ մանր.

Պաշտօնեան մեծ սնդուկից հանեց և մօտենալով դռնակին, տախտակի վրայ տարածեց մի կապոց կապտագոյն թղթադրամ. յետոյ սկսեց համրել։ Ուսանողը նախ չէր կարողացել նրանց քանիսնոց լինելը իմանալ։

—Մէկ, երկու...տասը...համրում էր պաշտօնեան.

Զուէյցարական հարիւրանոց թղթադրամներ էին նախ, իսկ յետոյ քսան հատ էլ կանաչագոյն յիսուննոցներ։

—Գիտէք, առում էր պաշտօնեան համրելով, եթէ չորս օր առաջ գայիք, ձեր ֆրանսական թղթադրամների հատի վրայ մի ֆրանկ աւելի կը շահէիք։

—Ա՛...մոմռաց Խոզավաճառը և հետզհետէ թղթադրամները քաշեց դէպի իրեն։

Ուսանողը նայում էր։ Ուշադրութիւնը կեդրոնացնում էր հայեացքի մէջ։ Որքան ահագին գումար էր փռուած իր աչքի առջև.... 2000 ֆրանկ. տաս հատ հարիւրանոց, քսան հատ էլ յիսուննոց, որոնց պաշտօնեան մէկ մէկի վրայ դրած, վայելչապէս այնպէս սահեցրեց և երկարութեամբ փռեց, որ իւրաքանչիւրի վրայ գրուած մեծ թիւերը երևում էին ուսանողի աչքին։

Եթէ վեց հատ, միայն վեց հատ այդ յիսուններից իր ձեռքն ընկնէր այդ բոպէին... Որքան լաւ բան կը լինէր։

...Երկրորդ տաշին էր որ նա, Ծընէլի համալսարանի իրաւագիտութեան ուսանողը, յետին աստիճան մուրացկանութեամբ՝ ուսանում էր. զրկել էր իրեն ամեն տեսակ զուարճութիւններից, կերել էր Մադամ Լիւբրոկի հաղ

Նա գիտէ որ այսօր չէ վաղը՝ պէտք ունենայ իրեն հետևողներ, իր պէս մըտածողների մի խումբ, որ մօտիկ ապագայում կը մաքրի ճահիճը զեռուններից և մթնոլորդն ու կեանքը ամեն տեսակ պարազիտներից...

Շաւիղը իր «հաւատամքը», իր credo-ն ունի, որին միշտ պիտի հետևի, քանի նրա մէջ շունչ կայ։

Նահատակում է որ «մարդկութեան ապագան՝ նրա իմացականութեան զարգացմանը մէջ է և դա միջոցն է գիտութիւնը։ Նա հաստատում է որ գիտութիւնով ճշմարտութիւնն է, որին մարդ պիտի միշտ ձգտի, որպէս մի երկնային գաղափարի։ Նա հաւատում է որ այդ ճշմարտութիւնից դուրս ամեն ինչ խաբերայութիւն է և ստութիւն։ Նա հաւատում է վերջապէս, որ այդ ճշմարտութիւնների գումարը՝ ապագայում մարդուն տալու է մի անհաշուելի ոյժ և երջանկութիւն»....

Նա դրանց հաւատում է և ոչ մի ակնթարթ համաձայն չէ պայծառ լոյսի մէջ խաւար, մաքուր ջրի մէջ միկրոպ և ճշմարտութեան մէջ կեղծութեան կամ ստութեան նշոյլ խառնելու թոյլ տալ։

Այդպէս է արել նա այս տարեշրջանում, այդպէս ևս և աւելի նախանձախնդիր կը լինի նա այսուհետև.... Վ. Ֆ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Փոքր Ասիայից ոտացվում են ամենավատ լուրեր։ Զէյթունում կատարեալ անկարգութիւն է, իսկ միւս մասերում տեղի են ունենում սոսկալի բաներ։ Քիւրդերը, ստիպելու համար Զէյթունի հայերին՝ անպատվում են կանանց։ Պօլսի հայ կանայք մտադիր են կառավարութեան դիմել խնդրելով ազատել իրենց ընկերու հիների պատիւը փոքր Ասիայում։ Այստեղի կանանց թիւը 70,000 է հաշվում և եթէ նրանց մի տասներորդ մասն իսկ գնայ, էլ կարելի է երևակայել թէ ինչ կը լինի։ Պատրիարքը մտադիր է ետ կեցնել կանանց, բայց դժուար թէ յաջողի...

Моск. Вѣд.

Վեց վիլայեթներում արդէն նշանակուած են նահանգապետների քրիստոնեայ օգնականներ (մօավին)։ Նրանցից միայն երկուսն է ինձ ծանօթ. մէկը արժանաւոր մարդ է, իսկ միւսը մի պոլսական ինդիգեան (դաւեր կազմող)։

Times

Երկու օր առաջ (22 նոյ) Մուշի մէջ դեղի է ունեցել կոտորած. երկու կողմից էլ ընկել են շատ մարդիկ։ Ստացել է լուր Քեամիլ փաշայի փախուստի մասին Զմիւռնիայից, ուր նա նահանգապետ էր։

Моск. Вѣд.

Դեկտեմբեր 10-ին յունաց տիեզերական պատրիարքը հրաժարական տուաւ։ Բ. դուռը խնդրել էր նրան որ գրաւոր ազդարարութիւն տայ թէ յոյները շատ բաւական և գոհ են. պատրիարքը գործը սինոդի դատողութեանը յանձնեց և սինոդը մերժեց տալ մի այդպիսի զեկուցում։ Այն ժամանակ պատրիարքը հրաժարական տուեց և սինոդը ընդունեց հրաժարականը։

Հաստատ աղբիւրներից յայտնվում է որ Թիւրքաց մինիստրութեան նոր կատարեալ փոփոխութիւն է տեղի ունենալու։

Times

Քաղաքում նորից յայտնվում են հրաւիրագրեր ապստամբութիւն առաջացնելու։ Ոստիկանութիւնը աշխոյժով փընտռում է յանցաւորներին, բայց դեռ անյաջող է։

Моск. Вѣд.

Մի քանի օր է որ կասկածելի թիւրքեր ու քիւրդեր լցվում են Կ. Պօլիս. գալով Փոքր Ասիայի կողմերից։ Նրանց գալու նպատակն է ծախել այստեղ՝ թալանած իրերը. նրանք յոյս ունին նաև մեծ կողոպուտի եթէ կառավարութիւնը թոյլ տայ Ստամբօլում ապստամբութիւն։ Նրանք ի միջի այլոց պարծենում են իրենց արած աւազակութիւններով և աշխատում են գրգռել ստորին դասակարգի մահմեդական հասարակութեան, որոնք և առիթ են փնտռում յարձակելու բազարների վրայ։ Սրա հետ կապ ունի և այն. որ կառավարութիւնը գաւառներն է վերադարձնում տղքատ դասակարգի հայերի։

Daily News

Köln. Zeit. թերթին հաղորդում են Լոնդոնից որ Ուեստմինստրի դուքսը խնդրել է Սալսբիւրիից վերջ դնել հայկական սարսափներին։ Սալսբիւրին պատասխանել է որ եթէ Անգլիայում հասարակական կարծիքը գրգռուած է, սակայն ցամաքի վրայ (Եւրոպայում) այդքան մեծ շարժում չը կայ և կարելի է վախենալ որ Մեծն Բրիտանեան մենակ մնայ, եթէ շարունակի ճնշում գործել Թիւրքաց վրայ։

Վօլֆի գրասակ.

Այնտեղ Փոքր Ասիայում, սկսած Սև ծովից մինչև Սէլէքսանդրէթի ծոցը և դրէթէ Ռոֆորից մինչև Եմէն, տիրում է ամենակատարեալ անիշխանութիւն։ Հրկեզ են հազարաւոր կեանքեր, քանդել հազարաւոր տներ, ամբողջ քաղաքներ կրակի են տուել, ամբողջ տարաշխունչը, ամեն տեսակ ապրանք և ոչնչացրել երկրի հարստութիւնը։ Անցեալ օր, Էրզրումում, բազարի մէջ ոպանել են 10 հայեր և 15-ի վիրաւորել։ Վանում կոտորածը սկսել է ամսիս 23-ին. դեռ մանրամասնութիւններ յայտնի չեն։ Սմասիայից հեռագրում են զոհերի թիւի մի այնպիսի սոսկալի մեծութիւն, որ չեմ համարձակվում գրել։ Ձմեռը անշուշտ քիչ հանդարտութիւն է բերելու. քիւրդերը իրենց թալանով քաշվելու են, բայց գարնան նորէն վերադառնալու պայմանով։ Սովը ահռելի կերպով սկսել է. ոսկու գնով մի կտոր հաց չէ ճարվում։ Տրապիզոնում տասը սու արժող բանը այժմ 5 ֆրանկ արժէ, անհաշիւ է թշուառների թիւը, որոնք մեռնելու են ցրտից և սովից։ Դիտմամբ կոտորել են ընտանիք կերակրող հայրերի... այժմ հերթը կանանց ու տղայոցն է և սովը այդ կը կատարի... Սասունում մանաւանդ, ամբողջ ազգաբնակութիւնը անհետանում է, որովհետև Ռուսիան, այլ ևս լիքը ներս խուժող գաղթականներով, անկարող հալածականներին ներս ընդունելու, փակում է իր սահմանները։ Անգլիայի ամբողջ դրամը չէ կարող բաւական դժուար թէ յաջողի...

Моск. Вѣд.

Վեց վիլայեթներում արդէն նշանակուած են նահանգապետների քրիստոնեայ օգնականներ (մօավին)։ Նրանցից միայն երկուսն է ինձ ծանօթ. մէկը արժանաւոր մարդ է, իսկ միւսը մի պոլսական ինդիգեան (դաւեր կազմող)։

Times

Երկու օր առաջ (22 նոյ) Մուշի մէջ դեղի է ունեցել կոտորած. երկու կողմից էլ ընկել են շատ մարդիկ։ Ստացել է լուր Քեամիլ փաշայի փախուստի մասին Զմիւռնիայից, ուր նա նահանգապետ էր։

Моск. Вѣд.

Դեկտեմբեր 10-ին յունաց տիեզերական պատրիարքը հրաժարական տուաւ։ Բ. դուռը խնդրել էր նրան որ գրաւոր ազդարարութիւն տայ թէ յոյները շատ բաւական և գոհ են. պատրիարքը գործը սինոդի դատողութեանը յանձնեց և սինոդը մերժեց տալ մի այդպիսի զեկուցում։ Այն ժամանակ պատրիարքը հրաժարական տուեց և սինոդը ընդունեց հրաժարականը։

Հաստատ աղբիւրներից յայտնվում է որ Թիւրքաց մինիստրութեան նոր կատարեալ փոփոխութիւն է տեղի ունենալու։

Times

Քաղաքում նորից յայտնվում են հրաւիրագրեր ապստամբութիւն առաջացնելու։ Ոստիկանութիւնը աշխոյժով փընտռում է յանցաւորներին, բայց դեռ անյաջող է։

Моск. Вѣд.

Մի քանի օր է որ կասկածելի թիւրքեր ու քիւրդեր լցվում են Կ. Պօլիս. գալով Փոքր Ասիայի կողմերից։ Նրանց գալու նպատակն է ծախել այստեղ՝ թալանած իրերը. նրանք յոյս ունին նաև մեծ կողոպուտի եթէ կառավարութիւնը թոյլ տայ Ստամբօլում ապստամբութիւն։ Նրանք ի միջի այլոց պարծենում են իրենց արած աւազակութիւններով և աշխատում են գրգռել ստորին դասակարգի մահմեդական հասարակութեան, որոնք և առիթ են փնտռում յարձակելու բազարների վրայ։ Սրա հետ կապ ունի և այն. որ կառավարութիւնը գաւառներն է վերադարձնում տղքատ դասակարգի հայերի։

Daily News

Köln. Zeit. թերթին հաղորդում են Լոնդոնից որ Ուեստմինստրի դուքսը խնդրել է Սալսբիւրիից վերջ դնել հայկական սարսափներին։ Սալսբիւրին պատասխանել է որ եթէ Անգլիայում հասարակական կարծիքը գրգռուած է, սակայն ցամաքի վրայ (Եւրոպայում) այդքան մեծ շարժում չը կայ և կարելի է վախենալ որ Մեծն Բրիտանեան մենակ մնայ, եթէ շարունակի ճնշում գործել Թիւրքաց վրայ։

Վօլֆի գրասակ.

Այնտեղ Փոքր Ասիայում, սկսած Սև ծովից մինչև Սէլէքսանդրէթի ծոցը և դրէթէ Ռոֆորից մինչև Եմէն, տիրում է ամենակատարեալ անիշխանութիւն։ Հրկեզ են հազարաւոր կեանքեր, քանդել հազարաւոր տներ, ամբողջ քաղաքներ կրակի են տուել, ամբողջ տարաշխունչը, ամեն տեսակ ապրանք և ոչնչացրել երկրի հարստութիւնը։ Անցեալ օր, Էրզրումում, բազարի մէջ ոպանել են 10 հայեր և 15-ի վիրաւորել։ Վանում կոտորածը սկսել է ամսիս 23-ին. դեռ մանրամասնութիւններ յայտնի չեն։ Սմասիայից հեռագրում են զոհերի թիւի մի այնպիսի սոսկալի մեծութիւն, որ չեմ համարձակվում գրել։ Ձմեռը անշուշտ քիչ հանդարտութիւն է բերելու. քիւրդերը իրենց թալանով քաշվելու են, բայց գարնան նորէն վերադառնալու պայմանով։ Սովը ահռելի կերպով սկսել է. ոսկու գնով մի կտոր հաց չէ ճարվում։ Տրապիզոնում տասը սու արժող բանը այժմ 5 ֆրանկ արժէ, անհաշիւ է թշուառների թիւը, որոնք մեռնելու են ցրտից և սովից։ Դիտմամբ կոտորել են ընտանիք կերակրող հայրերի... այժմ հերթը կանանց ու տղայոցն է և սովը այդ կը կատարի... Սասունում մանաւանդ, ամբողջ ազգաբնակութիւնը անհետանում է, որովհետև Ռուսիան, այլ ևս լիքը ներս խուժող գաղթականներով, անկարող հալածականներին ներս ընդունելու, փակում է իր սահմանները։ Անգլիայի ամբողջ դրամը չէ կարող փրկել նրանց, որոնք մնացել են թշուառ լեռնականներից...

Temps

Դիպլոմատական գործերը, որոնք դատարկ էին պահականաւերի խնդրի առիթով, այդ հարցի լուծելուց յետոյ, վերսկսեցին։ Դեսպանները այժմ հետևելու են հիւպատոսների տեղեկագիրների հիման վրայ գործերի դրութեանը։

Times

## ԴԻՄԱՑՄՈՒՆՔ ՉԸ ԿԱՑ

—

Պարսկահայը դդաշմունք չունի... Այս կծու ածականը մենք տալիս ենք նրան առանց վրդովվելու, հիմնելով նոր, ամենաթարմ փաստերի վրայ։ Եսամոլութիւնը, հաճոյամոլութիւն, փառամոլութիւնը այն աստիճան կաշկանդել է նրանց ուրիշ զգացմունքները, որ մի քիչ չեն մտածում վանելու իրենցից եսական գաղափարը, դէն շպրտել ամիրայական գռեհկութիւնները, թոթափուել սխոլաստիքական հետևողութիւններից, ընդունել ճշմարիտ յառաջադիմական գաղափար, ձեռք տալ միմեանց, սատար լինել, չը խեղդթիւրել ազգային գործերը իրենց գծուծ շահերի համար, փոքր ինչ նրբացնել կաշիները—եթէ այդ իրենցից է կախուած—մարդ լինել։ Բայց այդ բոլորի փոխարէն մենք տեսնում ենք հակառակը։

Ազգաներին հաճոյանալու և իրենց անձնական օխմար շահը աչքի առաջ ունենալու համար՝ նա զոհում է այն ամենը, ինչ որ ազնիւ է, ինչ որ գեղեցիկ է։ Թքիր երեսին, ապտակիր, մրտիր, կեղտերը երևան հանիր, նա չի զգալ, ուշադրութիւն չի դարձնիլ. ձեռքերը երեսին կպցրած՝ այդ բոլոր անարգանքների միջից դուրս կը պրծնի դէպի իր նշանաբանը, որտեղ շահ ունի, որին հաճոյանում է...

Շաւիղը բոլորում է իր երկրորդ տարին, ինչ-ե՞ր ասես այդ երկու տարուայ ընթացքում չեղաւ, ինչ կեղտեր առես երևան չեկաւ. ինչ պարազիտային դիմակով ազգի արիւնը քամողներ չասես որ դիմակազերծ չեղան,—մենք կրկնողութիւններ չենք ուզում անել. բաւական է, որ Շաւղի համար։

Եթէ այդ օրը ստանար, նա յոյս ունէր անել այդ. բայց ուր է, այդ օրը ամբողջ նա անից դուրս չէր գնացել, նամակացուցիչին էր սպասել։ Մինչև ժամը 2-ը սպասել էր, դեռ էլի դուրս չէր գնացել էլի կը սպասէր, եթէ եգիպտացի հայերը չը գային և նրան չը խնդրէին՝ իրենց օգնելու։

Դժգոհութեամբ դուրս էր գնացել, բայց յետոյ, կամենալով մխիթարել իրեն, մտածել էր որ գուցէ իր տանը չ'եղած միջոցին, նամակացուցիչը բերած լինէր փողը։ Նա յաճախ այդպիսի փորձեր էր անում հիմնելով իր ուղեղի մէջ idée fixe եղած այն նախապաշարման վրայ, որ եթէ մի բանի վրայ չմտածէր, այն բանը աւելի շուտով կ'իրագործուէր։

Իրաւ է որ եթէ մարդ մի բանի վրայ երկար չէ մտածում, նրան շատ չէ փափագում և հետևապէս նրան ձեռք ձգելու ուշացումը

տած, մէկ ֆրանկանոց անմարքելի ճաշը, ծխել էր սիվէտ կոչող խոտանման ծխախոտ որից նրա կոկորդը ծխափողի էր փոխուել, մի խղճալի հաղուստ էր միայն որ երկու տարի պատսպարում էր նրա մարմինը։

Նշարավաճառին պարտք, դրավաճառին այնքան տալիք, որ սա էլ չէր կամենում գիրք տալ. սենեակի մէջ մի կտոր շաքար կամ թէյ իսկ չունէր։ Այժմ, որ արձակուրդ էր, նա տեսնում էր թէ ինչպէս բոլոր միւս ուսանողները ամբողջ օր լեռներն էին գնում պտոյտի, երեկոյեանները զարհիջի գաւառի առջև նստած զուարճութեամբ երջվում էին. ամէն տեսակ ապուշ, յիմար (ասենք նա բարկութիւնից էր որ այդ ածականները գործ էր ածում) ճանապարհորդներ, մանաւանդ այն երկարաղէմ ապուշ անդլիացիներ և սեաղէմ վայրենի հնդիկներ, դալիս վայելում էին Ծընէի զուարճութիւնները, ման էին դալիս ձիերով, կառքերով, կոնցերտ էին գնում, ուտում խմում... իսկ ինքը մի հասարակ զրծաւորի երջանկութիւնն անգամ չէր կարողանում ունենալ...

Ոչ որ ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ։ Որի փոյթը որ շողը, ծարաւը, հագուստ չ'ունենալու ամօթը... այդ բոլորը խեղդում—տանջում էին նրան իւրաքանչիւր օր։ Որքան նրանի էր տալիս նա իր երկրին սուր զոնէ չէր կարող տեսնել ոչ զուարճութիւնը այդպէս բացայայտ ու շեշտուած և ոչ էլ վայելչութիւնն այդքան առատ։ Ցաճախ կը կամենար նա ընկնել մի այնպիսի երկիր, ուր եթէ իրենից թշուառներ չը լինէին բոլորը, զոնէ իր չափ լինէին. ուր նա նախանձից չը տրաքէր, ուր նա չը փափաղէր, այդքան սաստիկ պահանջ չը ղդար այդ բոլորին, տեսնելով որ ուրիշները վայելում են, իսկ ինքը ոչ...

Երկու տարի այդպէս տանջելուց յետոյ ամիս ու կէս առաջ յաջողել էր իր քննութիւնների մի ամենադժուար մասը տալ, մնում էր միւս մասը հոկտեմբերին։

Երկրից իրեն փող ուղարկելը դադարել էր. ոչ որի չունէր այնտեղ իր աղգական։ Հօրը և մօրը վաղուց նա կորցրել էր։ Գրել էին իրեն որ մի քաղաքում իր համար փող են «մուրում» և կ'ուղարկեն որ նա դրանով գոնէ վերադառնար ու իր դլխի ճարը տեսնէր միւս տարուայ համար։

Նրա սպասածը այդ փողն էր, որ և չէր գալիս դեռ. մի ամիս էր, որ նա օրէցօր սպասում էր։ Պարտք անելով էր ապրում, պարտք անելով երէք անդամ հեռագրել էր, բայց փողը դեռ չէր դալիս։ Պարապել անհնար էր, ոչ մի գիրք ձեռք առնել չէր կարողանում։

Ժամանակը անցնում էր, մի ամիս էր մնացել քննութեան ժամանակին։ Ե՞րբ գնալ ուրեմն, ե՞րբ հասնել փող գտնելու և ե՞րբ վերադառնալ՝ քննութիւններին հասնելու

ընթերցողները մի անգամ յետ նայեն։ Իսկ երբ այդ բոլորը նրանց երեսին խփուեց, փոխանակ կարմրելու, յետ դառնալու, փրփուր բերաններին կատաղեցին, վայրենաբար այս ու այն անձի վրայ յարձակուելով, հայհոյեցին անարգեցին. փոխանակ գրչի դէմ գրչով կռուելու՝ գործ դրեցին ամիրայական միջոցներ, ստոր, վատի միջոցներ։ Ի՞նչ անի Շաւիղը. ինչ հաշիւ պիտի տայ երրորդտարեայ առաջին համարում. թէ՞ մի առ մի կեղտեր ու ապականութիւններ։ Մտրակէ՞ հասարակականկործանիչներին, թէ մեղմ լինի։ Դատողութիւնների մէջ չենք մտնում. և ոչ էլ ուզում ենք հեռուն ակնարկել. ներկան, իր սկան ցոլցերը վրդովեցուցիչ են։ Ասպագան Շաւիղի նշանաբանն է. նա գիտէ իր դիրքը. թող առաջ դնայ, աչքի առաջ ունենալով Հայնէի գեղեցիկ միտքը «ամենայն տեղ, երբ մի մեծ հոգի մարմին է տալիս մտքին, շուտով առաջ է գալիս մի Գողգոթա՝ թող առաջ գայ այդ փրկութեան «գողգոթան» և «մարմին տայ մտքին»։

Օրինակ. ինչ անուն տալ ռաշտիցիներին, երբ կամքի զօրութիւն չունեն, երբ հաւաքական ոյժը դնում են մի վատի, աւազակի ոտի տակ. չորս ամիս շարունակ, մի ինչ որ համբակ խալիֆայի խայտառակութիւնները լրագրի նիւթ շինած՝ գրում են, դատապարտում են, իսկ երբ համբակը մեղապարտվում է, անարգվում է, ցեխի է հաւասարվում, նորէն, ենթարկուած մեծ ճանապարհի աւազակապետի ազդեցութեան՝ խարանուածը մտնում է իր խալիֆայական վարժատունը։ Ի՞նչ պէտք է յուսալ նրանից այսուհետև, կամ—կրկնում ենք—ինչ անուն տալ ռաշտիցիներին, երբ չունին զգացմունք, երբ իրենց կրթական զեկը տալիս են մի քան հաստակաշիների ձեռքը։

Միթէ այդ օրինակին չեն վերաբերվում մարդացիները, որ դարձեալ ենթարկուելով մի քանի հաստափոր ազատների քմահաճոյքներին — խարանուած ֆալչուն կարգում են կրթական գործի զեկավար, որ վաղ թէ ուշ այդ ապիկարները պիտի ապականեն—սրբապղծեն կրթութեան գործը յամօթ և նախատինս երիտասարդների։ Չենք ուզում նորէն կրկնել զանազան սպարապետների արարմունքը, որոնք ազգային գործերը ձեռքներում խաղալիք դարձրած՝ կեղեքում—ծծում են ժողովրդի արիւնը.։

Շաւղի ընթերցողները եթէ մի անգամ խոր հայեացք ձգեն գործերի դրութեան վրայ, իսկոյն կը զան այն համոզմունքին որ պարսկահայը, ոչ միայն զգացմունք չունի այլ թէ միանգամայն մեռած է, և բարոյապէս, և ֆիզիկապէս։

Բայց երիտասարդներին է մնում սթափուել, ճակատ տալ. արգելքները տապալել, կոխ տալ այդ անպէտք դիակները, առաջ ընթանալ, մի նոր սերունդ ստեղծել և իր ճշմարիտ նշանաբանը ունենալ Շաւղի դրոշը։

Խուրշիդ

Արտաբիլ

## ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Խարբերդ 22 նոյ. 95

Ամեն ինչ տակն ու վրայ է հոս. կայրեն ու կը կողոպտեն ամեն կողմ. գիւղերը աւերակ դարձան։ Հապուսի գիւղը օրինակ, որ 500 տուն հայեր էին, այլ աւերակ եղաւ։ Գիւղապետը որ վախեր քաղաքն է եկեր քանի մը մարդոց հետ, կը պատմէ թէ 2000 քիւրդ գիւղին վրայ յարձակեցան, մէկ կողմէն թալանեցին մէկալ կողմէն վառեցին։ 500-էն աւելի հայեր ապաստաներ էին եկեղեցիին տանիքին վրայ, ոմանք ալ մէջը. քիւրդերը տակէն բռնկեցուցին. զոհերը տանիքէն վար նետուեցան ու մեռան, անոնք ալ որ պզտիկ էին, չեն կրցեր նետուել, կատաղի բոցերուն մէջ այրեր են.. Այսպէս. դաշտն ամբողջ այս վիճակին մէջն է. Խոյլուն արտերու է փոխուեր։ Հինգ ժամ հեռու Իչմէն գիւղը քարուքանդ են ըրեր. եկեղեցին մզկիթի փոխեր, ժողովարանն՝ ախոռի, սա չափ լուր ունիմ որ 800 հոգիէ բաղկացեալ գիւղէն հազիւ 60—70 հոգի ողջ մընացեր են։ Երթևեկութիւն քաղաքէն գիւղեր, գիւղերէն քաղաք՝ ամենևին դատրած է... Բալու ալ մեծ խառնակութիւններ են եղեր։ Երկու ամիս է Փիւրդիստանէն ու Ռնդվանէն լուր չունենք...

Սատակ ժողովեցէք մեզի համար, զի բոլորս ալ անօթի ենք. ամբողջ հարուստներ աղքատացան, կոտորած կը շարունակուի, բոլորս ալ աւուր հացի կարօտ ենք մնացեր. ցուրտը կուգայ, սովը ետևէն. ոչինչ չունենք, ոչինչ չը մնաց.....

Գ.

## ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Թիֆլիս 28 նոյ 95

Զը գիտեմ խմբագրութիւնդ այդ հեռու Պարսկաստանում արդե՞օք ստանում է Новое Время, Недѣля, Новь, կամ Русскія Вѣдомости և կամ վերջապէս Новости ռուսական լրագիրները։ Այդ ռուս մամուլի օրգանները բացի Новое Время-ի խայտառակ և հոգեվաճառ խմբագրից, բոլորն էլ ցաւակցութեամբ են խօսում հայերի ներկայ տագնապալից դրութեան մասին. մինչև անգամ Недѣля շաբաթաթերթը իր № 41 հոկտեմբերի 8-ին թուագրած համարում, մի առաջնորդող յօդուածով, որը «Գեղեցիկ հայեր» վերնագիրն է կրում, այնպիսի քրիստոնէական և անաչառ զգացմունքներով ներշնչուած շանթեր է տեղացնում մի քանի հոգեվաճառ և կաշառակեր խմբագիրների ու օրգանների հասցէին, որպիսիքն են Нов. Время թերթը իր խմբագիր Սուվորինով և զանազան աշխատակիցներ «Անտիկվարիումներով»... և այլ գրականական աւելցուկներով։

Իր № 41-ում Недѣля-ն մի առաջնորդողով ի միջի այլոց ասում է. «Գտնվում են այնպիսի թերթեր, որոնք ամբաստանում են հայերին այն երևակայական հրեշային զառանցանքների մէջ, որպիսին միայն կարող էին հնարել հոգեվաճառ, անբարեխիղճ աշխատակիցները»։ Եւ իրաւ Новое Время-ի մի համարում մօտերումս լոյս տեսաւ մի առաջնորդող «Մեծ Հայաստանը մինչև Բոստով» վերնագրով, որի մէջ ասում է թէ «հայերը գաղտնապէս ձգտում են (բոլոր Կովկասի արդիւնաբերութիւնը ձեռք բերելուց յետոյ) անկախ թագաւորութիւն ստեղծել Կովկասում, որոց մայրաքաղաքը կը լինի Թիֆլիսը։ Հայերը ձգտում են Կովկասը երկրորդ Լեհաստան դարձնել... ով կը թողնի այդ. պիտի խեղտել ռուսահայերի այդ շարժումը նոյն իսկ ռազմի մէջ»։

«Կովկասի հայերը (բենց ինտելլեգենդ երիտասարդներով, միայն զբաղուած են յեղափոխական կոմիտեներ սարքել և տաճկաստանցի հայերին թէ նիւթապէս և թէ զէնքեր ուղարկելով.... Տաճկաստանում կոտորածներին պատճառները այն «սրիկայ», «շառլատան» և ձրիակեր երիտասարդներն են, որոնք յեղափոխականի դիմակի տակ փողեր են որոնում և գրգռում ամբոխին Փանսլաւիզմ թուրքի ու քուրդի հետ ու կոտորում—կոտորվում...» Այդ յօդուածից յետոյ մի ոմն «Ռուս ճանապարհորդ» նոյն Нов. Время-ում ի լուսն և ի հաստատումն վերոյիշեալ յօդուածի գրում է թէ «ճիշդ է, որ հայերը այժմ զառանցում են մի անկախ թագաւորութեան մասին» և աւելացնում է, որ «այդ բանի գլխաւոր պատճառը Կովկասի հայերն են իրենց խմբագիրներով և ինտելիգենդներով»։

Բայց այս օրերումս մի նամակ ստացուեց Մուրճի խմբագրութեան մէջ, որով մի հայ զինուորական բժիշկ այդ «Ռուս ճանապարհորդին» անուանելուց յետոյ ստախօս, կեղտոտ ու վատ, աւելացնում է. «Ես ձեզ կապտակեմ իրականապէս, գործնական կերպով, պարոն և հրաւիրում եմ ձեզ վերականգնեցնել այն հայ ինտելլիգենդ դասակարգի պատիւը, որը և ինձ է վերաբերում. ես այդ բաւականութիւնը պահանջում եմ կամ դատաստանով և կամ մի այլ պատուաւոր ճանապարհով»։ Նամակի վերջում հայ զինուորական բժիշկը աւելացնում է. «երբ կընդունէք իմ առաջարկութիւնը, յայտնեցէք ձեր համաձայնութեան մասին Մուրճի խմբագրութեան, որը իմանալով ձեր անունը, իսկոյն կը յայտնի ձեզ և իմ անունը»։ Իսկական նամակը ուղարկուած է Պետերբուրգ «Ռուս ճանապարհորդին» իսկ պատճէնը Մուրճի խմբագրութեանը։

---

այնքան էլ տանջալից չէ լինում։ Հմտածել—նշանակում է ժամանակի երկարութիւնը չնչմարել և հեռաւոր այդ երկարութիւնից չտանջուել։

Ուզում էր փողի գալու վրայ չմտածել. որպէս զի «շուտ» ստանար, բայց այդ «շուտ»ը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ժամանակի երկարութեան ոչ—նշմարողութիւնը։

Եւ որքան քիչ էր իր ուզածը։ Երեք հարիւր ֆրանկ, միմիայն երեք հարիւր։

Որքան յուսահատվում էր երբ գիտակցութեան ունէր որ փողը չէ ստանում և ուշանում է ինքը, իզուր ժամանակ կորցնում, զուր ծախսեր անում պարտքով։ Զգիտէր թէ ոյժ կ'ունենար ապրելու այնուհետև, եթէ հոկտեմբերին աւարտելու չը հասնէր և ստիպուած լինէր սպասել մինչև յետագայ մարտ ամիսը։

Հէ՞ որ Մարին սպասում էր նրան։

Վախենում էր կորցնել Մարիին և նրա սէրը։ Վախ էլ կար, ահա բաւական ժամանակ էր որ նրանից էլ նամակ չէր ստանում։

Ի՞նչու սիրեց այդ աղջկան և իր տանջանքների թիւը մէկով էլ աւելացրեց.....

Երեք հարիւր, միայն երեք հարիւր ֆրանկ էր ուզածը և ոչ մի սու իսկ աւելի...

Կոթնած զանձարանի պատին, այդ բոլորը անց էր կացնում նա իր մտքովը, իսկ վողբին Խոզավաճառը բռնահարում և ծոցն էր կոխում հարիւրանոցներ ու յիսուննոցներ։

Ժողովում էր, զուարթ քրքիջ էլ արձակում և ասում էր պաշտօնեային։

—Հէ՞, բարեկամ, երեք ամսուայ զուարճութեան համար բաւական չէ՞ այդքանը։

Ի՞նչ, այդ Խոզը 2000 ֆրանկ պիտի մրսխէր միայն զուարճութեան համար. մինչ ինքը—Ուսանողը, միայն 300 ֆրանկի պէտք ունէր իր ապագայն, իր կեանքը փրկելու համար և չէր կարողանում ունենալ։

Ուրեմն այդ Խոզավաճառը պիտի տանէր այդքան դրամագլուխը՝ ուտելու ամէն տեսակ անօգուտ ու խայտառակ զուարճութիւնների մէջ, իսկ ինքը պիտի մաշէր 300 ֆրանկի համար։

Ի՞նչ օգուտ մարդկութեան այդ «Խոզ»ից և նրա երկու հաղարանոց վալելչութիւնից, մինչ ինքը—Ուսանող, իր ամբողջ էութիւնն իւրայինների օգտի համար էր դրել. տանջուել էր այդքան իր հայրենիքի, իր շրջապատողների համար և այսօր, 300 ֆրանկի համար նա արգիլվում էր նպատակից մի քանի քայլ հեռու, անկարող լինելով հասնելու նրան....

Մի կատաղի ակնարկ ձգեց Խոզավաճառի վրայ և փողերի, որոնք հետզհետէ ծալվում էին ու սիրոջ լայն զրպանը մտնում։ Որքան էլ շուտով էր հաւաքում։ Զը թողեց Ուսանողին՝ աչքով գոնէ նրանց գգուելու հաճոյքը վայելել։

Գրպանեց Խոզարածը. նորից լայն կերպով ծիծաղեց, յետոյ շապկի թեով ճակատի քրքիջները սրբեց ու մռմռաց.

—Ինչ շոգ է այստեղ, հէ՞... այժմ Էլիան որքան լաւ կը լինի։

—Բարի զուարճութիւն, մաղթեց նրան զանձապահը, Էլիան լաւ Պարիզուհիներ կան։

—Հէ՞, հէ՞, խրխնջաց Խոզավաճառը—ոչ, բարեկամ. պարիզուհիները թանդ են. այ, շուէյցարուհիք—խօսք չունիմ—աւելի տնտեսագիտական են...

—Սրամիտ, ծիծաղեց պաշտօնական կերպով պաշտօնեան.

Խոզավաճառը մի հպարտ ակնարկ ձգեց իր շուրջը։

—Այնպէս չէ՞, հարց տուաւ նա Ուսանողին։

Ուսանողը դէմքը կնճռեց և կատաղութեամբ նրան նայեց։

Խոզավաճառը քիչ ետ քաշուեց, մի «հը՞մ...» արձակեց, յետոյ բարևեց զանձապահին և հեռացաւ։

Դռան մօտից դարձաւ նա, մի ակնարկ ձգեց դէպի Ուսանողը և մռմռաց,

—Sapristi, ինչ տխուր դէմքեր կան այստեղ...

(Կը շարունակուի)

Անցեալ շաբաթ օրը Մուրճի խմբագրութիւնը ստանում է Պետերբուրգից մի հեռագիր «Ռուս Ճանապարհորդից» որով վերջինս պահանջում է յայտնել զինուորական բժիշկի անունը. Մուրճի խմբագիրը հեռագրում է թէ՝ «Զինուորական բժիշկի անունը յայտնելը պայմանաւորվում էնրա ձեզ արած առաջարկութեան ընդունելով. խնդրում եմ պատասխանում վաւերացնել՝ տալ ձեր ստորագրութիւնը»: Այս հեռագրին «Ռուս Ճանապարհորդից»—մի ահագին, 12 երեսից բաղկացած, բաց նամակով դիմում է Մուրճի խմբագրութեան և խմբագրին, նկատելով թէ ուրեմն Մուրճի խմբագրութիւնը ևս համախոհ և մասնակից է բժշկի պէս անարխիստ մարդոց, որովհետև իսկականում այդպիսի մի արտօնութիւն չէ տրվում խմբագրին զինուորական բժշկի անունը բացանելու առիթով»: Մուրճի խմբագրութիւնը որոշում է չը պատասխանել բացի այն, որ Մուրճի խմբագրութիւնը իր խմբագրի հետ, ոչ մի առնչութիւն չունի զինուորական բժշկի հետ. և եթէ մի այնպիսի հեռագիր է տուել խմբագրութիւնը, այդ միայն բարոյական պարտականութիւնից դրդուած՝ բժշկի յանձնարարութիւնն է միայն կատարել. հեռագիրը կրկին անգամ աւելացնում է «կանենում էք բաւականութիւն տալ բժշկին թէ ոչ պատասխանեցէք»: Դեռ «Ռուս Ճանապարհորդից»—այդ անանուն վատից՝ պատասխան չը կայ:

Յ.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս համարով վերջանում է Շաւիղի երկրորդ տարեշրջանը: 1896 թւի առաջին համարը լոյս կը տեսնի յունվար 7-ին: Շաւիղը այսուհետև, փոխանակ շաբաթ օրերի, լոյս կը տեսնի կիւրակէ օրերը: Յայտարարում ենք որ ապառիկ բաժանորդագրութիւնները կը մնան անպատասխան և ով որ չի նորոգիլ 1896-ի համար իր բաժանորդագրութիւնը թէ քաղաքիս մէջ և թէ այլ տեղերում, նրան ոչ մի համար չի ուղարկուիլ: Այս առիթով նորից յայտնում ենք մեր Պարսկահայ ընթերցողներին, որ 96 թւի բաժանորդագրութեան համար գործակալ չեղած քաղաքներից բաժանորդագիրը կարող են ուղարկել պարսկական նամակագրոշմներով:

—

Կովկասի լրագիրները հաղորդում են որ Ատրպատականի այն առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը, որին հանգուցեալ Գէորգ Դ. Կաթուղիկոսը հրատարակել է որպէս «չի զգրաւի լրբութեամբ, արբեցող և անառակ ի վարս իւր և 'ի գբնացս որպէս ապացուցանեն գրաւոր և բանաւոր վկայութիւնք բացմաց'ի ժողովրդոց Ալէքսանդրապոլոյ...» և այլն և այլն. այդ եպիսկոպոսը ասում ենք, նշանակուած է Կովկասի հայոց ուսումնարանական ժողովի նախագահ, Վեհ. Կաթուղիկոսի ձեռամբ:—Աչքներս լոյս, այդ էր պակաս:

Եղանակները գալնանային են թէհրանում. ձիւնի երես դեռ չենք տեսել. մի քանի թեթև, աւելի զովացուցիչ՝ անձրևներ միայն եկել են:

—

Վիէննայի Հանդէս ամսօրեայ ամսագիրը իր վերջին համարում ունի մի քաղաքական տեսութիւն, որ ապացուցանում է թէ ինքն էլ զգում է այն խորին վիշտը, որով համակուել է այժմ ամբողջ հայ ազգը:

—

Լոյս է տեսել ռուսերէն լեզուով մի շատ հետաքրքիր գիրք «Հայերի դրութիւնը Թիւրքիայում» վերնագրով: Այդ գիրքը, որ բաղկացած է 444 երեսներից, ունի պրոֆ. Կամարովսկիի մի յառաջաբանը, Գլադստոնի ճառը, արտասանած 1895 յուլիս 26-ին. Բոլէն-Ժէքմէնի «Հայաստան, հայեր և դաշնագիրներ» յօդուածը, Մակկոլի «Անգլիայի պատասխանատուութիւնը հայերի առաջ». Գրինի «Հայկական ճգնաժամը և Թիւրքիայի տիրապետութիւնը (Սասունի կոտորածը). Դիլօնի «Գործերի դրութիւնը Հայաստանում». Գր, Ջանշիէվի «Հայկական հարցը Թիւրքիայում» Մի վերջաբանով «Էֆիօբմների նախընթաց օրը» վերնագրով և մի յօդուածով Խրիմեանի մասին՝ վերջանում է գիրքը որ ունի նաև Գլադստոնի և Խրիմեանի պատկերները: Այդքան հարուստ բովանդակութեամբ նշանաւոր յօդուածների ժողովածու գիրքը արժէ միայն 1 ռուբլի:

—

Այս շաբաթւայ հեռագիրների մեծ մասը վերաբերում է Տրանսվաալի խնդրին. և որովհետև Շաւիղի երկշաբաթեայ դատարում մի ժամանակ է ծագել այդ խնդիրը, մենք այս անգամ ստիպուած ենք թողնել և մեր յաջորդ տարուայ № 1-ով միայն տալ մեր ընթերցողներին մի ամփոփ ծանօթութիւն այդ խնդրի մասին:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՖՐԱՆՍԻԱ.—Արդէն յայտնի է որ չափաւոր հանրապետական Ռիբօի նախարարութիւնը ընկնելուց յետոյ, նոր մինիստրութիւն կազմելը յանձնուեց արմատական Լէօն Բուրժուային: Առաջին անգամն է որ արմատականները անցնում են կառավարութեան ղլուխ և հէնց սկզբում ցոյց են տալիս իրենց փայլուն գործունէութիւնը: Նոր մինիստրութիւնը իր ծրագրի ամենագլխաւոր կէտն է սահմանել աճեցող հարկատուութեան (impôt progressif) դրութիւնը: Բայց նա ամէնից առաջ պահանջեց վերստին բանալ և հետախուզել Հիւսիսային երկաթուղիների գործը, որը Ռիբօի նախարարութեան ժամանակ աշխատում էին քնեցնել, երեսի վախենալով երեսն հանել, քրքրել շատ կեղտեր, որոնց մէջ հանդէս պիտի գային կառավարչական անձեր: Այդպէս էլ եղաւ: Անցտանելին Արտօնը, որ դատապարտուած էր որպէս խարերայ և որը իր անհետանալու հետ ոչնչացնում էր շատ գաղտնիքներ, ձերբակալուեց Լոնդոնում և սկսել է այժմ յայտնել շատ բաներ: Արտօնի յայտարարութեան համաձայն ոստիկանութեան գործակալ Դիւպան ձերբակալուեց, որպէս յանցաւոր, «ծածկել կամենալով մեղապարտին և իր պաշտօնի գաղտնիքներ յայտնող»: Նրան հարցաքննելուց յետոյ, իսկոյն միմեանց ետևից. սկսեցին խուզարկութիւններ շատ բանկիրներ, փաստաբաններ... մօտ Վերջին լուրերը, ինչպէս հաղորդում է Frank. Zeit. գերմանական թերթը, հաստատում են որ Ռիբօի նախարարութիւնը խաբած է մնացել երկար ժամանակ, որովհետև իր նշանակած գաղտնի խուզարկող ոստիկան Դիւպան ընկերակից է եղել այն ընկերութեան, որի նպատակն է եղել ծածկել, թագցնել Արտօնին: Դիւպային մեղադրող փաստերի հետ յայտնուել են թղթեր, որոնք թոյլ են տալիս դատի քաշելու շատ անձերի...

Նոր նախարարութիւնը այդ գործից յետոյ չէ մոռանում զանազան անտեսական հարցեր, որոնց նա մշակում է և յաջող լուծման համար աշխատում: Ֆրանսիան այս նոր նախարարութեան արմատական ուղղութեամբ անշուշտ շատ բան է շահելու, եթէ մէջտեղ չը գան ֆրանսական կեղտոտ ինտրիգներ, որպիսին այժմ դաւում են նոյն իսկ հասարակապետութեան նախագահ Ֆելիքս Փորի դէմ: Առ այժմ Ֆրանսիան զբաղուած է Արտօնի գործով որ մեծ յուզում է առաջացրել ամբողջ Ֆրանսիայում:

ԻՏԱԼԻԱ. Իտալիոյ պատերազմը Աբիսսինիայում շատ անյաջող է գնում: Italia Militare թերթը յայտնում է որ պաշարի սակաւութիւնը կոտորում է զինուորներին շատ աւելի: Մենելիքը յաղթում է և իտալացիք առ այժմ յաղթուող են: Սակայն վերջին տեղեկութիւնները մտածել են տալիս որ եթէ Մենելիքը Ամբա-Ալաջիի յաղթութիւնից յետոյ կանգ չառնէր, անշուշտ իտալացիք բոլորովին կ'ընկճուէին և կը թողնէին Աբիսսինեան: Իտալիան պատրաստվում է նոր զօրութիւններ ուղարկել այնտեղ: Շատ լրագիրներ առաջարկում են նոյն իսկ որ Իտալիան հաշտութիւն կայացնի Մենելիքի հետ:

ԳԵՐՄԱՆԻԱ.— Ռէյխստագը բացուեց դեկտ. 3-ին Վիլհիլմ կայսեր մի գահական այնպիսի ճառով որ անգլիացի մեծ ծերունին—Գլադստոնը իր զայրոյթն է յայտնել այդ ճառի մանաւանդ այն բովանդակութեան մասին որ վերաբերում է հայկական հարցին: Այդ կէտի մասին ճառը աւելի քան տմարդի է և եսամոլ: Ռէյխստագը այժմ սկսել է զբաղուել բիւտճէի հարցով, երբ մերժեց այն առաջարկը օրինագծի, որը դատի ենթարկել էր պահանջում Ռէյխստագի սոցիալիստ անդամներին:

Բիւտճէի մասին նշանաւոր է Ռիխտէրի ճառը, որի բովանդակութիւնը տպուած է եւրոպական բոլոր մեծ թերթերում:

Իսկ Բեբել, սոցիալ—դեմոկրատների գլխաւորի ճառը, որ տեւել է ամբողջ 2 կէս ժամ և որ կտրուկ լեզուով մերժել է սոցիալիստների մասին եղած ամբաստանութիւնները և պաշտպանել իրենց, այնքան մեծ ուշադրութիւն է գրաւել որ սրահի մէջն է եղել կանգուէրը նոյն իսկ և մինչև վերջ ականջ դրել: Բեբելը յայտնի է որպէս մեծ պերճախօս, մանաւանդ սուր լեզու ունեցող: Նա վերջացրել է իր ճառը այսպիսի խօսքերով. «Հանգիստ եղէք բոլորդ, մեր համոզմունքների հիման վրայ, մենք ոչ թէ հակառակորդ ենք, այլ համակիր գերմանական միութեան, որը անհրաժեշտ պայմանն է տնտեսական և հասարակական ազատութեան»....

Սակայն ամենից հետաքրքիր անցքը Գերմանիայում վերջերս կառավարութեան ձրդտումնէ դիսցիպլինական իշխանութիւն բանեցնել գերմանական համալսարանների վրայ: Այդ ձգտումը հանդիպեցմի բուռն դիմադրութեան և համալսարանի պրոֆէսօրներ, թւով 53 յայտնի գիտնականներ, հրապարակապէս յայտնեցին իրենց զայրոյթը: Ստորագրողների մէջ կան Մոմմզէնի և Վիրխովի պէս հսկայ գիտնականներ, որոնք ընդհանուր ոյժով աշխատում են պահպանել գերմանական գիտութեան յաջողութիւնը համալսարանների անկախութեամբ:

ՉԻՆԱՍՏԱՆ.—Ընդմտեան Չինաստանի մի մեծ մասը այս րոպէիս ապստամբութեան մէջ է. Դունգան—սեաոցզաս կոչուող ցեղը, որ մահմեական է, ոտքի է ելել: Այդ ապստամբութիւնը պատրաստվում է եղել վաղուց. 70ական թւականներին չինական կառավարութիւն նրանց շատ անգութ վերպով զսպեց, բայց վերջին 7-ին—ժապոնական պատերազմի ժամանակ նրանք նորից ոտքի ելան: Ապստամբութիւնը սկսեց Հանսուի մի քաղաքից և Չինացիներն էր որ զրգռեցին: Դունգանները (այդ ապստամբուող ցեղը) ընտրում էին մի իմամ. երբ բաժանուեցին կուսակցութեան և իճում էին, չինական կառավարութիւնը միջամտեց զօրքերով, դունգանները ընկան լեռների վրայ և բոլորին ջարդեցին, այդպէս սկսեց ապստամբութիւնը: Դունգանները սկսեցին քաղաքներ տիրել և չինացիներին մորթոտել: Չինացիները սկսեցին զինուորական ոյժը և բարբարոսութիւն ի գործ դնել, որ և զայրացրեց Չինաստանի ամբողջ մահմետականներին:

ՍՊԱՆԻԱ.—Կուբա կղզու բնակիչները յաղթում են սպանիական զօրքերին և այս օրերս Սպանիան ստիպուած է 20000 զօրք ուղարկել: Մինչև այժմ 20000 ուղարկեց և նա էլ Թիւրքիայի պէս ստիպուել է անդադար տպագրել թէ «չնորհիւ... հայն հայն չուտով խաղաղութիւնն ու անդորրութիւնը պիտի հաստատուի կղզու մէջ:

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. 5 յունվար (Ն. տ.) Փորմոզայից հասած լուրերը յայտնում են որ մի ապստամբութիւն է տեղի ունեցել կղզու մէջ. 10000 ապստամբներ յարձակուել են Թաիվէյի վրայ, բայց ետ են մղուել. սպասվում են ուրիշ յուզումներ:

Մատրիտ. 6 յունվար Կուբայից հասած լուրերը հաղորդում են որ ապստամբները մի մեծ յաղթութիւն են տարել և ջարդել են սպանիացիներին Քօլօնում, և գրաւել նրանց թնդանօթները: Ապստամբները այժմ գրաւել են Հաւանա գնալու ճանապարհը:

Լոնդոն. 7 Յուն. Աշանթիի արշաւանքի վերաբերեալ վերջին լուրերը հաղորդում են որ Սըր Ֆ. Սքոթը հասել է Էսսիաման. Մի լրտես հասնելով բանակը լուր է տուել որ Աշանթիից մի ցեղապետ մեկնել է Կումմասիից դէպի նրանց գալով Փրէմբէհ թագաւորի կողմից, առաջարկելու համար խաղաղութիւն.

Վաշինգտոն. 6 Յունվ. Միաց. Նահանգների կառավարութիւն 100 միլիոնի մի նոր փոխառութիւն է արել:

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ